

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

27.12.2013թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 57 անդամներից ներկա էին 43-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բուհի գիտական գործունեության 2012-2013 ուստարվա հաշվետվություն:

Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

2. Բուհի գրադարանի 2012-2013 ուստարվա հաշվետվության ներկայացում և գրադարանի կանոնադրության ու գրադարանից օգտվելու կարգի հաստատում:

Ձեկ.՝ գրադարանի տնօրեն Գ. Աղուզումցյան

3. Բուհի 2013թ. ֆինանսական գործունեության մասին:

Ձեկ.՝ ֆինանսական բաժնի պետ Կ. Գրիգորյան

4. Ընթացիկ հարցեր:

- 4.1. ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտների հետ բուհում կազմակերպվող լրացուցիչ պարապմունքների 1 լսարանային ժամի համար պարապող դասախոսների, ուսուցիչների վարձատրման չափը սահմանելու մասին:

Հաղ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան

Ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 42 անդամներ. կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

- 1.ԼՍԵՑԻՆ.- Բուհի գիտական գործունեության 2012-2013 ուստարվա հաշվետվությունը (Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

Ա. Ֆարմանյանն իր ելույթի շրջանակներում կարևորեց հետևյալ հարցերը.

- ըստ ամբիոնների 2013թ. պաշտպանած կամ պաշտպանության ներկայացված ատենախոսությունների թիվը,
- հաշվետու ժամանակահատվածում ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքները /որակական և քանակական տեսանկյուններից/
- ամբիոնների կտրվածքով ուսանողների գիտական հոդվածների քանակը,
- «Գիտական տեղեկագիր» պարբերականի հրատարակված 2 համարներում բուհի դասախոսների մասնակցության աստիճանը,
- աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդներում բուհի դասախոսների ընդգրկվածությունը,
- գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները խթանելու համար դասախոսի հավելավճարի տարբերակված համակարգի կիրառման արդյունավետության գնահատումը /Ավելին կարող եք ընթերցել բուհի 2012-2013 ուստարվա գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունում/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Պրոֆեսորներ Հ. Դրմեյանը, Ս. Ալեքսանյանը:

Հ. Դրմեյանը ևս մեկ անգամ ընդգծեց, որ ֆիզիկայի տեսական աշխատանքները պետք է տարբերակել գործնական աշխատանքներից և փորձարարական ֆիզիկայի զարգացման համար պահանջվում է համապատասխան նյութատեխնիկական բազա, լրացուցիչ սարքեր և սարքավորումներ: Նա հույս հայտնեց, որ բուհի առաջիկա պլաններում կներառվի այդ հարցը և կստանա համապատասխան լուծում:

Ս. Ալեքսանյանը նշեց, որ հաշվետվությունը մանրամասնորեն ներկայացվեց: Տեղեկատվությունն իր համար բավականին հետաքրքիր էր, քանզի ցուցադրվել էին ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ քանակական տվյալներ: Ակներն է, որ

բուհում 2012-2013 ուստարվա կտրվածքով զգալի գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվել, բայց հեռանկարում, իհարկե, դեռ կան շատ անելիքներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2012-2013 ուստարվա բուհի իրականացրած գիտահետազոտական աշխատանքները գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**2.ԼՍԵՑԻՆ.-** Բուհի գրադարանի 2012-2013 ուստարվա հաշվետվության ներկայացում և գրադարանի կանոնադրության ու գրադարանից օգտվելու կարգի հաստատում (**Ձեկ.**՝ գրադարանի տնօրեն Գ. Աղուզումյան):

Գրադարանի սոցիալական գործունեությունը գլխավորապես միտված է եղել հետևյալ խնդիրներին.

- հարստացնել մասնագիտական-տեղեկատվական գրքերի բազան և ապահովել վերջինիս նպատակային օգտագործումը,
- ձեռնարկել աշխատանքներ՝ ուղղված էլեկտրոնային գրականության պաշարների կուտակմանը,
- կատարել գրքային ֆոնդի համալրման, մշակման, մասնագիտական գրականության ստուգման, մաքրման, տեղաշարժի, գրքերի վերանորոգման ու պահպանման աշխատանքներ,
- վերադասավորել և համակարգել մասնագիտական գրականությունը, շարունակել գրքային ֆոնդի համակարգչային մուտքագրումը, նկարագրումը և դասակարգումը՝ ըստ գրադարանային մատենագիտական դասակարգումների (ԳՄԴ),
- բարձրացնել գրադարանի աշխատակիցների սպասարկման որակի խնդիրները և ձեռնարկել վերջինիս բարելավման ուղղությամբ քայլեր,
- կիրառել ստեղծարար մեթոդներ՝ շահակիցների շրջանում խթանելու հետաքրքրությունը ընթերցասրահի հանդեպ,

➤ բարձրացնել ուսանողների գիտակրթական, տեղեկատվական կարիքները:

Վերոնշյալ կետերի ուղղությամբ դրական տեղաշարժը տեսանելի է, ակնհայտ, սակայն դեռ անելիքները շատ են և ենթադրում են անընդհատ նպատակասլաց գործունեություն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանը, ՈւԽ նախագահ Ս. Հովհաննիսյանը:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռ. Մարդոյանը բարձր գնահատեց ներկայացված հաշվետությունը, քանզի այն, ըստ նրա, արտացոլում է գրադարանի դրական և բացասական կողմերը, առկա արտաքին հնարավորություններն ու սպառնալիքները:

Ա. Ֆարմանյանը նկատեց, որ Գ. Աղուզումցյանն իր ելույթում չբարձրաձայնեց վերականգնման ենթակա հնամաշ գրքերի հարցը: Նա նաև կարևորեց տարբեր հայաստանյան առաջատար բուհերի, գրադարանների հետ պաշտոնական համագործակցության հաստատումը, որը թույլ կտա քաղաքակիրթ եղանակով օգտվել նրանց գրականությունից: Ինչ վերաբերում է միջազգային առաջատար գիտական հանդեսների համացանց կայքերից օգվելուն, ապա այդ ուղղությամբ նախ կանցկացվի գիտական հետազոտություն և նոր կձեռնարկվեն համապատասխան քայլեր:

ՈւԽ նախագահը նկատեց, որ ընթերցասարահի աշխատակիցների սպասարկման վերաբերյալ ուսանողների շրջանում դեռևս կան դժգոհություններ և լավ կլիներ, եթե այդ ուղղությամբ մշակվեր և իրականացվեր կոնկրետ ծրագիր:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1. «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գրադարանի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

2. Հաստատել «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գրադարանի կանոնադրությունը:

3. Հաստատել «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գրադարանից օգտվելու կարգը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

### **3.ԼՍԵՑԻՆ.-**

Բուհի 2013թ. ֆինանսական գործունեության մասին (**Ձեկ.**՝ ֆինանսական բաժնի պետ Կ. Գրիգորյան):

Կ. Գրիգորյանի ներկայացմամբ՝ ֆինանսական բաժինը ստեղծվել է 2013թ. փետրվարի 1-ից և այս ժամանակահատվածում ղեկավարել է ինստիտուտի ֆինանսական գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով.

- ✓ մշակել է ինստիտուտի ֆինանսական ռազմավարությունը,
- ✓ որոշել է սեփական շրջանառու միջոցների պահանջարկը և հաշվարկել է շրջանառու միջոցների նորմատիվները, պլանավորել է դրանց շրջանառության արագացմանն ուղղված միջոցառումները,
- ✓ որոշել է հիմնական ֆոնդերի կապիտալ (ընթացիկ) վերանորոգման ֆինանսավորման կարգը և պայմանները,
- ✓ նախապատրաստել է փոխհաշվարկների անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերը,
- ✓ ապահովել է ֆինանսական և կապիտալ ներդրումների պլաններով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը,
- ✓ մասնակցել է այն կարգերի մշակմանը, որոնք ուղղված են՝
  - վճարունակության ապահովմանը,
  - գերնորմատիվային պահուստների առաջացման կանխարգելմանը և չօգտագործվող ապրանքանյութական արժեքների վերացմանը,
  - շահույթի ավելացմանը,

- ծախսերի նվազեցմանը,

- ✓ իրականացրել է ինստիտուտի ֆինանսական կարգապահության բարձրացմանն ուղղված միջոցառումները,
- ✓ հաշվառել է Ֆինանսական միջոցների շարժը, ինչպես նաև կազմել է ֆինանսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ֆինանսական հաշվառման ու հաշվետվության ստանդարտներին համապատասխան,
- ✓ վերահսկել է հաշվետվությունների կազմման և ձևակերպման ճշգրտությունը,
- ✓ ապահովել է Ֆինանսական տեղեկատվության արժանահավատությունը, կազմակերպել է ընկերության ֆինանսական պլանների ցուցանիշների իրազեկումը,
- ✓ որոշել է գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալները՝ ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների հետ համաձայնեցված պայմանագրերի և նախահաշիվների հիման վրա,
- ✓ ապահովել է կապիտալ ներդրումների և փոխհատուցելիության հաշվարկների կազմման, ձևակերպման և նախահաշիվների հաստատման ճշտությունը,
- ✓ ապահովել է ընկերության ֆինանսական վիճակի թափանցիկությունը,
- ✓ ղեկավարել է հեռանկարային և ընթացիկ ֆինանսական պլանների նախագծերի, կանխատեսվող հաշվեկշիռների և դրամական միջոցների բյուջեների մշակման աշխատանքները,
- ✓ մասնակցել է գիտական հետազոտությունների և մշակումների, ինչպես նաև ղեկավարել է շահույթի և շահութահարկի հաշվարկման աշխատանքները,
- ✓ ապահովել է.

- եկամուտների ժամանակին ստացումը, ինչպես նաև սահմանված ժամկետներում ֆինանսահաշվարկային և բանկային գործառնությունների ձևակերպումը,
- մատակարարների և կապալառուների հաշիվների ժամանակին վճարումները,
- աշխատավարձի ժամանակին վճարումները,
- հարկերի և տուրքերի, սոցիալական և բանկային վճարումների ժամանակին իրականացումը,
- ✓ վերահսկողություն է իրականացրել.
  - ֆինանսական պլանի և բյուջեի կատարման, շահութաբերության պլանների և այլ ֆինանսական ցուցանիշների կատարման նկատմամբ,
  - դրամական միջոցների ճիշտ ծախսման նկատմամբ,
  - սեփական և փոխառված շրջանառու միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ,
- ✓ ապահովել է սեփական և այլ կազմակերպություններից ստացված գաղտնի համարվող տեղեկատվության պաշտպանվածությունը,
- ✓ կատարել է հաշվապահական ծրագրի ներդրումային աշխատանքներ,
- ✓ բանկային համակարգի միջոցով ապահովել է աշխատակիցներին և կրթաթոշակ ստացող ուսանողներին վճարային պլաստիկ քարտերով /Ավելին կարող եք ընթերցել բուհի 2013թ. ֆինանսական գործունեության հաշվետվությունում/ :

**ՈՐՈՇԵՑԻՆ.-**

Ընդունել ի գիտություն:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**4. ԼՍԵՑԻՆ.-**

Ընթացիկ հարցեր:

**4.1.ԼՍԵՑԻՆ.-**

ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտների հետ բուհում կազմակերպվող լրացուցիչ պարապմունքների 1 լսարանային ժամի

համար պարապող դասախոսների, ուսուցիչների վարձատրման չափը սահմանելու մասին (Հաղ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան):

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Դասախոսների, ուսուցիչների կողմից ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտների հետ բուհում անցկացվող լրացուցիչ պարապմունքների 1 լսարանային ժամի համար սահմանել 1350 դրամ:  
**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** - 43 անդամներ. կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝

Վ. Գրիգորյան

Քարտուղար՝

Թ. Խաչատրյան